

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Նեղութեան օրը ինծի կանչէ, ես քեզ պիտի ազատեմ ու դուն զիս պիտի փառաւորես: (Մաղձ. 50.15):

Ասիկա իսկապէս պատուական խոստում մըն է: Ահաւասիկ նեղ եւ ստիպողական պարագայ մը, «նեղութեան օրը»: Այսպիսի օրուան մը կէսօրն անգամ մութ է եւ իւրաքանչիւր անցնող ժամ նախորդէն աւելի մութ կը թուի: Ու այս խոստումը նիշդ այսպիսի մութ ու ամպոտ օրուան մը համար է:

Ահաւասիկ քաջալերիչ խրատ մը. «Ինծի կանչէ»: Ասիկա ընելու համար յորդորի պէտք չունիք, ասիկա մեզի բնութիւնը ըլլալու է, Անոր կանչել ամէն օր եւ օրուան որեւէ ժամուն: Ի՞նչ մեծ ողորմութիւն է Աստուծոյ կանչելու արտօնութիւնը ունենալ եւ ի՞նչ մեծ իմաստութիւն է այդ արտօնութիւնը լաւագոյնս գործածելով մեծագոյն չափով անկէ օգտուիլ: Ի՞նչ յիմարութիւն է «Նեղութեան օրը» մարդոց դիմել: Տէրը կը հրաւիրէ մեզ որ մեր խնդրանքները Իրեն տանիմք եւ Իր առջեւ պարզենք: Մենք պիտի ընդունինք այս հրաւերը եւ պիտի չուշանանք այսպէս ընելու:

Ահաւասիկ մեծ խոստում մը՝ «Ես քեզ պիտի ազատեմ»: Ինչ որ ալ ըլլայ քու դժուարութիւնդ, Աստուծոյ համար բնաւ տարբերութիւն չընեն եւ Անոր քով ոչինչ կայ անկարելի: Խոստումը միշտ նոյնն է, ապահով եւ ուրախ ազատութիւն՝ անձամբ Իր ձեռքովը գործուած: Հաւատանք Իրեն, ու Ան պիտի պատուէ մեր հաւատքը:

Ահաւասիկ սքանչելի վերջաւորութիւն մը. «դուն զիս պիտի փառաւորես»: Քու ակնկալածէդ շատ աւելի գոհ պիտի մնաս քու աղաղակիդ պատասխանէն ու զիմքը պիտի գովես: Ո՛հ, ասիկա ընենք քան որ վստահ ենք թէ Անիկա հաւատարիմ է Իր խոստումը կատարելու ամէն գնով:

ԵԹԷ Կ՛ԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵԹԷ Կ՛ ՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԼ ՈՒՆԵՐԲՈՂԵԼ ԱՍՏ ՈՒԾՈՅ ՓԱՌՔԸ, ԿԱՐԴԱՆՔ Մաղ մ ո ս 8 Ո՛Վ ՏԵՐ, մեր ՏԵՐԸ,

ի՛նչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:

Փառքդ աւելի բարձր է՝ քան երկիւնքը բայց դուն մանուկներուն ու ծծկեր երեխաներուն բերնով գովեստդ հիստեցիր քեզի հակառակորդներուն դիմաց, որպէսզի լուրջեան մատնես թշնամիներդ եւ հակառակակորդներդ: Երբ կը դիտեմ երկիւնքդ, մատներուդ գործը, կը դիտեմ լուսինը եւ աստղերը, որ դուն հաստատեցիր, կը մտածեմ.- Ի՛նչ է մարդը, որ կը յիշես զայն, մարդ արարածը ի՛նչ է, որ հոգածութիւն ցոյց կուտաս անոր:

Չայն քիչ մը վար դասեցիր քեզմէ, փառքով ու պատուով զայն պսակեցիր. քու բոլոր ստեղծածներուդ վերակացու կարգեցիր զայն, անոր իշխանութեան ենթարկեցիր ամէն ինչ, հօտերն ու արջաները, ևաւ բոլոր վայրի անասունները, երկնքի թռչուններն ու ծովուն ձուկերը, եւ ծովերուն մէջ լողացող բոլոր էակները: Ո՛Վ ՏԵՐ, մեր Տէրը,

ի՛նչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak ճրագ թերթ](#)



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԶՈՒ ԽՕՍԲԴ ԽՍ ՂՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ , 27 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

ԹԻՒ 52

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 41.4-14 Երբ. 7.11-25:
ՅԻՍՈՒՍ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 19.12-28

ՅԻՍՈՒՍ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ (19.11-28)

Մինչ ժողովուրդը անոր ըսածները մտիկ կ'ընէր, Յիսուս իր խօսքը շարունակեց, եւ Երուսաղէմի մօտեցած ըլլալով ու գիտնալով, որ ժողովուրդը կը կարծէ՝ թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի, հետեւեալ առակը պատմեց անոնց. «Ազնուական մարդ մը կար, որ հեռաւոր երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ: Նախքան մեկնիլը, կանչեց իր տասը ծառաները եւ իւրաքանչիւրին հարիւր արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ. «Շահարկեցէ՛ք այս դրամը մինչեւ վերադարձա՛մ»: Բայց իր քաղաքացիները կ'ատէին զինք. հետեւաբար պատգամաւոր դրկեցին իր ետեւէն, ըսելով. «Չենք ուզեր, որ ան մեր վրայ թագաւոր դառնայ»: Երբ որ ազնուականը թագաւորական իշխանութիւնը առաւ եւ վերադարձաւ, անմիջապէս կանչեց իր ծառաները, որոնց դրամ տուած էր, գիտնալու համար թէ ի՛նչ շահած են: Առաջինը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, մէկ տուածիդ դէմ տասը շահեցայ»: Տէրը ըսաւ. «Ապրի՛ս, բարի ծառայ, քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա քեզի տասը քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երկրորդ ծառան ալ եկաւ եւ ըսաւ. «Մէկ տուածիդ դէմ հինգ շահեցայ»: Տէրը ըսաւ. «Քեզի ալ հինգ քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երրորդը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ, զայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած: Կը վախնայի քեզմէ, որովհետեւ խիստ մարդ մըն ես: Կ'առնես ինչ՝ որ քուկը չէ եւ կը հնձես ինչ՝ որ չես սերմանած»: Տէրը անոր ըսաւ. «Չա՛ր ծառայ, քու խօսքովդ քեզ պիտի դատեմ: Քանի գիտէիր, որ կ'առնեմ ինչ՝ որ իմս չէ եւ կը հնձեմ ինչ՝ որ չեմ սերմանած, ինչո՞ւ ուրեմն դրամս սեղանաւորներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ թէ վերադարձիս զայն տոկոսով միասին պիտի պահանջէի»: Ապա սպասաւորներուն ըսաւ. «Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէք տուէք անոր՝ որ տասնապատիկը շահած է»:

Անոնք ըսին. «Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը շահած է: Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը ունի»: «Գիտցէ՛ք, ըսաւ ան, ունեցողին աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ իր ունեցած ամենէն փոքր բաժինն ալ: Իսկ իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր՝ որ իրենց թագաւոր ըլլամ, հոս բերէք եւ իմ ներկայութեանս սպաննեցէք զանոնք»:

**ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎՄԱԿՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԸՆ
40.18-31**

Որո՞ն կը նմանցնէք զԱստուած կամ ի՞նչ բանի հետ կը բաղդատէք:

Կուռքի՞: Բայց ձուլագործն է որ կուռքը կը ձուլէ, ու ոսկերիչը զայն ոսկիով կը պատէ եւ արծաթէ շոթաներ կը շինէ անոր համար:

Նմանապէս հիւսը անփուտ ծառի կոճղ մը կ'առնէ եւ իր ճարտարութեամբ կ'աշխատի անկէ անշարժ կուռք մը շինելու:

Այնքան տգէտ էք, չլսեցի՞ք կամ ձեզի չպատմուեցա՞ն երբեք Աստուծոյ մասին, որ երկրին հիմերը դրաւ:

Աստուծոյ մասին, որ կը նստի երկրագունդէն այնքան վեր՝ որ երկրի բնակիչները մարախներու չափ կ'երեւին իրեն: Ան է որ երկինքը վարագոյրի պէս կը տարածէ եւ զայն վրանի պէս կը կանգնէ իրեն համար:

Ինքն է որ իշխանները կը բռնաջնջէ եւ երկրի դատաւորները կ'ոչնչացնէ:

Բոյսի մը պէս անոնք հազիւ տնկրւած կամ ցանուած, եւ տակաւին հողին մէջ չարմատացած՝ կը փչէ անոնց վրայ եւ կը չորնան, ու փոթորիկը զանոնք կը տանի յարդի պէս:

Արդ, «Որո՞ն կը նմանցնէք զիս, ո՞վ կը հաւասարի ինձի», կ'ըսէ Սուրբը, Աստուած:

Երկինք բարձրացուցէ՞ք ձեր աչքերը եւ դիտեցէ՞ք. ո՞վ ստեղծեց այս բոլոր աստղերը, եթէ ոչ ան՝ որ զանոնք իրենց անուններով կը կանչէ: Այնքան մեծ է իր իշխանութիւնը եւ սաստիկ՝ իր զօրութիւնը, որ անոնցմէ ոեւէ մէկը դուրս չի գար իր խօսքէն:



4.16-5.10

Այսուհետեւ համարձակօրէն մօտեցանք Աստուծոյ աթոռին, ողորմութիւն եւ շնորհիք գտնելու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային:

Արդարեւ, ամէն քահանայապետ որ մարդոց մէջէն կ'ընտրուի, պաշտօն ունի մարդոց կողմէ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց մեղքերուն համար նուէրներ եւ գոհ մատուցանելու: Եւ որովհետեւ ինքն ալ մարդ է, կրնայ հասկնալ մարդոց տգիտութիւնն ու փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց, քանի ինքն եւս նոյն տարութիւնները ունի: Անոր համար է, որ ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար պէտք է գոհ մատուցանէ:

Գիտէ՞ք նաեւ, թէ ոեւէ մէկը չի կրնար ինքն իրեն քահանայապետութեան պատիւը առնել, այլ Աստուած է որ զայն այդ պաշտօնին կը կանչէ, նիշդ ինչպէս Ահարոն կանչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ քահանայապետութեան պատիւը, այլ զայն ստացաւ Աստուծմէ, որ իրեն ըսաւ. «*Դուն իմ սիրելի Որդիս ես, այսօր քեզ ծնայ*», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «*Դուն յախտեան քահանայ ես, Մեղքիս հոգեկան քահանային պէս*»:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք մահէն փրկել:

ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**ՍՐԲՈՑ ՈՐԴԻՈՅՆ ՈՐՈՏՄԱՆ՝
ՅԱԿՈԲԱՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԵՒ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆՉԻՆ**



Յակոբոս Առաքեալ

Չբեղիոսի եւ Սողոմէի որդին՝ Յակոբոս, իր եղբօրը Յովհաննէսի եւ Պետրոսի հետ կը կազմէին այն սեղմ շրջանակը, որու անկող կը վստահէր Քրիստոս:

Յակոբոս եւ Յովհաննէս իրենց ըմբոստ սկարագրին համար Քրիստոսի կողմէ կոչուեցան «Որդիք Որոտման»:

Յակոբոս առաքեալի նահատակութեան կ'անդրադառնայ միայն Գործք Առաքելոց գիրքը, երբ կը պատմէ թէ «երովդէս ձերբակալելով կը գլխատէ զայն՝ շուրջ 99 թուականին Երուսաղէմի մէջ»:

Յակոբոս կը հանդիսանայ առաջին նահատակը առաքելներու խումբին: Աւանդութիւնը կ'ըսէ թէ իր մարմինը կը նետուի Եաֆայի ծովը եւ ալիքները զայն կը հանեն Սպանիոյ ծովեզերքը, ուր մեծ ժողովրդականութիւն կ'ունենայ: Իսկ անոր գլուխը կը տարուի Յակոբոս Տեառնեղբայր առաքեալին, որ կը թաղէ զայն իր պարտեզին մէջ, որու վրայ ապագային կը կառուցուի Երուսաղէմի հայոց Ս. Յակոբեանց հիանալի եկեղեցին:

Յովհաննէս Առաքեալ

Առաքելներու դասին մէջ ամենէն կրտսեր եւ ամենէն երկար ապրող առաքեալն է Յովհաննէս, որ նաեւ ճանչցուած է «Սիրելի Աշակերտ» անունով:

Յովհաննէս եւ իր եղբայրը՝ Յակոբոս, Քրիստոսի կողմէ կը կանչուին երբ ձկնորսութեամբ կը զբաղէին: Ան Քրիստոսի երամեայ առաքելութեան ընթացքին ամենասիրելի անձը կ'ըլլայ Տիրոջ, եւ նոյնիսկ երբ մատնութեան ժամանակ միւս աշակերտները վախկալով կը լքեն զՔրիստոս եւ կը փախչին, Յովհաննէս կը հետեւի Անոր հասնելով մինչեւ Գողգոթա, ուր իր սիրոյն առի զնահատանք, Յիսուս Մարիամ Աստուածածին կոյսը կը յանձնէ Յովհաննէսի խնամքին եւ այդպիսով կ'աւանդէ իր հոգին:

Յովհաննէս առաքեալ նաեւ ծախօթ է իր անունը կրող սքանչելի անտարանով «Աւետարան Ըստ Յովհաննէսի»: Ան իր առաքելութիւնը կը շարունակէ Եփեսոսի մէջ եւ ապա աքսորեալ կը տարուի Պաթմոս կղզի, ուր կ'ունենայ իր յայտնութիւնները, որոնք ամփոփուած են «Յայտնութիւն Յովհաննէսի» գիրքին մէջ: Ունի նաեւ երկու ընդհանրական նամակներ, ուր կը խօսի կեղծ վարդապետութիւններէն զգուշանալու մասին եւ կը թելադրէ կեանքը ապրիլ ճշմարտութեամբ ու սիրով:

Յովհաննէս առաքեալ բնական մահով կը մեռնի 95 տարեկանին, շուրջ 100 թուականին Քրիստոսի: